ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ*

ՍԵՐԻԱ Ա

# ԼԻՑԵՆԶԻԱ № 0070

Սույնով վավերացվում է, որ
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ>>>> ՊՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անի թաղամաս, 11 փ. 5/2

(գտնվելու վայրը)

ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անի թաղամաս, 11 փ. 5/2

(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) — *Լ. Մկրտչյան* (անունը, ազգանունը)

Կ.Տ.

«12» *հուլիսի* 2017 թ.

*Անժամկետ*

(լիցենզիայի գործողության ժամկետը)

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՄԱՆ

N° 862-Ա/Ք «02» 10 2009 թ.

«ՀՀ կրթության և գիտության նախարարության «Գյումրու N 4 արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, հիմնական և միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության հիմքերով, մի շարք մասնագիտությունների գծով գործունեության լիցենզիա տալու մասին

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի եզրակացությունը

Հրամայում եմ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Գյումրու N 4 արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տալ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության հիմքով, 1 տարի տևողությամբ, ընդունելության սահմանային 25 տեղով՝ 0515-«Զարդակիրառական արվեստ» /ըստ ճյուղերի/, ընդունելության սահմանային 25 տեղով՝ 2203-«Համակարգիչների շահագործում», ընդունելության սահմանային 20 տեղով՝ 0605-«Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում», ընդունելության սահմանային 20 տեղով՝ 2014-«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում», հիմնական ընդհանուր կրթության հիմքով, 3 տարի տևողությամբ, ընդունելության սահմանային 25 տեղով՝ 0515-«Զարդակիրառական արվեստ» /ըստ ճյուղերի/, ընդունելության սահմանային 25 տեղով՝ 2203-«Համակարգիչների շահագործում», ընդունելության սահմանային 20 տեղով՝ 0605-«Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում», ընդունելության սահմանային 20 տեղով՝ 2014-«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտությունների գծով կրթական գործունեության լիցենզիա:
2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն» գործակալության պետ Մ. Մակիչյանին:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին

Նախարար՝ Ա. Աշոտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 220-Ա/Ք "26" մարտի 2014թ.

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ N 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ»» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ N 0002 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով, 43-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «9. Կրթության բնագավառ» բաժնի 5-րդ կետով, նույն հոդվածի 11-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու N 4 արհեստագործական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով N 0002 լիցենզիայում՝

1) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու N 4 արհեստագործական ուսումնարան»» բառերը և թիվը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» բառերով և թվով,

2) «ք. Գյումրի, Անի թաղ. 11 փող. 2, 5 ա» բառերը և թվերը փոխարինել «Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Անի» թաղ. 11 փող. N 5/2» բառերով և թվերով,

3) «(գտնվելու վայրը)» բառերից հետո լրացնել «գործունեության վայրը՝ «Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Անի» թաղ. 11 փող. N 5/2» բառերը և թվերը:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ.Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ.Ղազարյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

385-Կ/Ք   № 25 մարտի 2014

<<ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ>>>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ՝ 5-25.62.01.01-3-<<ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ (ԳԱԶԱԵՌԱԿՑՈՂ)>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2009թ հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված N 11-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան>>>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը տալ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային 20-ական տեղով, հիմնական և միջնակարգ հանրակրթության հիմքերով, համապատասխանաբար 3 և 1 տարի ուսման տևողությամբ՝ 5-25.62.01.01-3-<<Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (գազաեռակցող)>> մասնագիտության գծով գործունեության թույլտվություն:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ.Ղազարյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

/պաշտոնակատար/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

240 - Ա/Ք №10 ապրիլի 2015

<<ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ>>>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ՝ 8-96.02.01 <<ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ ԵՎ ԶԱՐԴԱՅԻՆ ԴԻՄԱՀԱՐԴԱՐՈՒՄ>> ԵՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ՝ 8-10.85.01 <<ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2009թ հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված N 11-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան>>>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը տալ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող 24 տեղով, հիմնական և միջնակարգ հանրակրթության հիմքերով, համապատասխանաբար 3 և 1 տարի ուսուցման տևողությամբ՝ 8-96.02.01 <<Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում>> և առկա ուսուցմամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող 24 տեղով, միջնակարգ հանրակրթության հիմքով, 1 տարի ուսուցման տևողությամբ 8-10.85.01 <<Խոհարարական գործ>> մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ.Ղազարյանին:

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

??????????????????

Apr 10 2015 1:24 PM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 173 - Ա/2 «12» [illegible] 2017 թ.

01/18.2/9168-17

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ»» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ N 0002 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, 0213.01.4-<<ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ/ՓՈՐԱԳՐՈՂ՝ ՔԱՐԵ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ/>> ՄԱՍՆԱԳՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, 0715.03.4-<<ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ՄԱՍՆԱԳՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի՝ N 72-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի, 17-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետի, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 11 հավելվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի՝ N 72-Ն որոշմամբ հաստատված ցանկի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 19-ի N 510-Ա/2 հրամանը, հիմք ընդունելով հաստատության տնօրենի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տալ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, հիմնական և միջնակարգ հանրակրթության հիմքերով, առկա ուսուցմամբ 3 և 1 տարի ուսուցման տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային 20-ական տեղերով՝ 0213.01.4-<<Գեղանկարչություն և քանդակագործություն /Փորագրող՝ քարե գեղարվեստական իրերի/>> մասնագիտության գծով գործունեության թույլտվություն:
2. «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացման N 0002 լիցենզիան փոխարինել, վերաձևակերպել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի և մասնագիտությունները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 12-ի N 72-Ն որոշմամբ հաստատված ցանկի պահանջներին՝ համաձայն հավելված 1-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թ. հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, հիմնական և միջնակարգ /լրիվ/ կրթության հիմերով, մի շարք մասնագիտությունների գծով գործունեության լիցենզիա տալու մասին» N 862-Ա/Ք, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թ. մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, հիմնական կրթության հիմքով՝ 0515 «Զարդակիրառական արվեստ /ըստ ճյուղերի/» մասնագտության գծով սահմանային տեղերի թիվն ավելացնելու, և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թ. հոկտեմբերի 2-ի N 862-Ա/Ք հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 461-

Բ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թ. ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, հիմնական և միջնակարգ կրթության հիմքերով՝ 0715.03.4- <<Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա /Գազաեռակցող/>> մասնագիտության գծով կրթական գործունեության թույլտվություն տալու մասին» N 385, և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թ. ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»» պետական ոչ առևտրային կազմակերպության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, հիմնական և միջնակարգ կրթության հիմքերով՝ 8-10.85.01- <<Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում>>, և առկա ուսուցմամբ, միջնակարգ հանրակրթության հիմքով՝8-10.85.01-<<Խոհարարական գործ>> մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն տալու մասին» N 240-Ա/Բ հրամանները:

4. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:
5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 195-Ա/2 «05» հուլիսի 2018

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ>> ՊՈԱԿ-Ի ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, <<0214.01.4 ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ/0214.01.01.4-ՈՍԿԵՐԻՉ/>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017Թ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 773-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված N 13-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ>> ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական կրթական ծրագրով, միջնակարգ հանրակրթության հիմքով, առկա ուսուցմամբ, ուսուցման 1 տարի տևողությամբ՝ <<0214.01.4 Ոսկերչություն /0214.01.01.4-Ոսկերիչ/>> մասնագիտության սովորողների սահմանային տեղերի թիվն ավելացնել 15-ով և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի հուլիսի 12-ի <<<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ(ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ N 0002 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ,

0213.01.4 <<ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ/ՓՈՐԱԳՐՈՂ՝ ՔԱՐԵ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐԻ/>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, 0715.03.4-<<ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի՝ N 72-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 773-Ա/2 հրամանի հավելված N 1-ի 1-ին կետում <<5>> թիվը փոխարինել <<20>> թվով:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել ՀՀ կրթության գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ